## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԵԳԻՐՔ, 2018»




*Լեզուն՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն*
*Ձևաչափ՝ Adobe Acrobat (.pdf.)*
*Թողարկման ժամկետը՝ նոյեմբեր*

«Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2018» վիճակագրական ժողովածուն ՀՀ ԱՎԾ առավել ամբողջական վիճակագրական հրապարակումն է, որն արտացոլելու է երկրի սոցիալ-տնտեսական վիճակը:

Ժողովածուի մեջ ներկայացվելու են վիճակագրական տվյալներ ՀՀ 2013-2017թթ. սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ:

Ներառվելու են երկրի ողջ տնտեսության, տնտեսական գործունեության կարևորագույն տեսակների և տնտեսության հատվածների վիճակը բնութագրող աղյուսակներ և պատկերներ:

Որոշ ցուցանիշներ ներկայացվելու են ՀՀ մարզերի և ք. Երևանի կտրվածքով: Ներկայացվելու են նաև տեղեկություններ միջազգային համեմատությունների վերաբերյալ:

Տարեգրքում ներկայացվելու են քարտեզային պատկերներ: Յուրաքանչյուր բաժնի վերջում ներառվելու են տնտեսական որոշ ցուցանիշների գծապատկերներ:

Տվյալները հաշվարկվում են վիճակագրության արդի մեթոդաբանության սկզբունքներին համապատասխան, ինչը հնարավորություն է ընձեռում դրանք համադրել այլ երկրների համանման ցուցանիշների հետ:

Նախկինում հրապարակված որոշ ցուցանիշներ ճշգրտվելու են: Տարեգիրքը նախատեսված է ընթերցողների լայն շրջանի համար:

## “STATISTICAL YEARBOOK OF ARMENIA, 2018”

*Language available: Armenian, Russian, English*
*Format: Adobe Acrobat (.pdf.)*
*Issue: November*

“Statistical Yearbook of Armenia, 2018” is the most complete statistical publication of the National Statistical Service of RA, reflecting socio-economic situation of the country.

The yearbook will cover statistical data on socio-economic situation of the Republic of Armenia for 2013-2017. It will include tables and images characterising the whole economy of the country, the most important types of the economic activity and the state of the economic sectors. Some indicators will be given by RA marzes (regions) and Yerevan city. Information on international comparisons will be presented as well.

Some diagrams on economic indicators will be included at the end of each section of the yearbook. Maps will be also available.

The data are calculated in accordance with the principles of modern methodology, which enables to compare them with similar indicators of other countries.

Some indicators published before will be adjusted.

The yearbook is intended for the wide circle of readers.

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԸ ԹՎԵՐՈՎ, 2018»




*Լեզուն՝ հայերեն, անգլերեն*
*Ձևաչափ՝ MS Word , MS Excel , Adobe Acrobat (.pdf.)*
*Թողարկման ժամկետը՝ հոկտեմբեր*

«Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2018» ժողովածուն առավել ամբողջական վիճակագրական հրապարակումն է ՀՀ մարզերի և Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ՝ 2013-2017թթ. շարժընթացի շարքերով:

Սույն հրապարակումը ներկայացնում է մանրամասն վիճակագրական տեղեկատվություն տարածաշրջանային (ռեգիոնալ) կտրվածքով:

Հատվածներով ընդգրկվելու են ցուցանիշներ մարզերի և Երևան քաղաքի աշխարհագրական բնութագրերի, ժողովրդագրության, զբաղվածության, արտաքին տնտեսական գործունեության, սոցիալական ոլորտի, աղքատության, ֆինանսների, գների ու սակագների և այլնի վերաբերյալ:

Ժողովածուն բաժանվում է երկու հատվածի՝ առաջինում վիճակագրական ցուցանիշների շարժընթացի շարքերն են, իսկ երկրորդ հատվածում ներկայացվում են ՀՀ մարզերի և Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող հիմնական ցուցանիշները:

Ժողովածուն նախատեսված է ընթերցողների լայն շրջանի համար: Նախկինում հրապարակված որոշ ցուցանիշներ ճշգրտվելու են:

## “MARZES AND YEREVAN CITY OF THE REPUBLIC OF ARMENIA IN FIGURES, 2018”

*Language available: Armenian, English*
*Format: MS Word , MS Excel ,Adobe Acrobat (.pdf.)*
*Issue: October*

“Marzes and Yerevan city of the Republic of Armenia in Figures, 2018” statistical handbook is the most complete statistical publication on socio-economic situation of RA marzes and Yerevan city with time series for 2013-2017. This publication is intended to present detailed statistical information on marzes (regions) and Yerevan city. Sections cover indicators on geographic characteristic, demography, employment, economy, external economic activity, social sphere, poverty, finance, prices and tariffs of marzes and Yerevan city and etc.

The handbook will be divided into 2 parts. The first part will include the time series of statistical indicators, and the second part will represent the main indicators characterising socio-economic situation of all RA marzes and Yerevan city.

This handbook is intended for the wide circle of readers. Previously published some indicators will be adjusted.

*Լեզուն՝ հայերեն, անգլերեն*
*Ձևաչափ՝ MS Word , MS Excel , Adobe Acrobat (.pdf.)*
*Թողարկման ժամկետը՝ նոյեմբեր*




«Հայաստանը թվերով, 2018» վիճակագրական գրքույկն ընթերցողին ներկայացնելու է հակիրճ վիճակագրական տեղեկատվություն ՀՀ 2017թ. սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ՝ 2016թ. համեմատությամբ: Առկա են լինելու նաև 2-3 տարիների շարժընթացի շարքեր: Ներկայացվելու է տեղեկատվություն ըստ տնտեսության առանձին հատվածների: Այն ընդգրկելու է նաև «Միջազգային համեմատություններ» հատվածը: Առանձին հատվածով ներկայացվելու են ՀՀ մարզերը և ք. Երևանը բնութագրող հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշները:

Տվյալները հաշվարկվելու են վիճակագրության արդի մեթոդաբանության սկզբունքներին համապատասխան, ինչը հնարավորություն է ընձեռում դրանք համադրել այլ երկրների համանման ցուցանիշների հետ: Որոշ բաժիններ համալրվելու են նոր աղյուսակային նյութերով: Նախկինում հրապարակված որոշ ցուցանիշներ ճշգրտվելու են:

## “ARMENIA IN FIGURES, 2018”

*Language available: Armenian, English*
*Format: MS Word , MS Excel , Adobe Acrobat (.pdf.)*
*Issue: November*

“Armenia in Figures, 2018” statistical booklet will provide reader with brief statistical information on socio-economic situation of RA for 2017compared to 2016. Time series for 2-3 years will be available as well. It will also include “International Comparisons” section. Separate chapter will represent main socio-economic indicators characterising RA marzes and Yerevan city.

Data will be calculated based on the up-to-date statistical methodology principles, which will enable to compare them with the similar indicators of other countries. Some chapters will be complemented with new tables. Previously published some indicators will be adjusted.

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՆԱՅՔ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԻԿ, 2018»




*Լեզուն՝ հայերեն, անգլերեն*
*Ձևաչափ՝ MS Word , MS Excel , Adobe Acrobat (.pdf.)*
*Թողարկման ժամկետը՝ հոկտեմբեր*

«Հայաստանի կանայք և տղամարդիկ, 2018» վիճակագրական ժողովածուն լուսաբանում է կին-տղամարդ հարաբերակցությունները ՀՀ-ում, հասարակական կյանքում նրանց հնարավորությունների օգտագործման ներկա վիճակը և անհրաժեշտ տեղեկատվական բազա է ապահովում սեռային (կանանց և տղամարդկանց համար իրավահավասարության պայմաններ ապահովող) պետական քաղաքականության մշակման համար:

Վիճակագրության մեջ կանայք և տղամարդիկ պետք է «տեսանելի» լինեն: Սեռային վիճակագրությունը հասարակության մեջ կանանց և տղամարդկանց տեղն ու դերն արտացոլող վիճակագրություն է, որը թույլ է տալիս հաշվի առնել ինչպես կանանց և տղամարդկանց առանձնահատկություններն ըստ սոցիալ-ժողովրդագրական խմբերի, այնպես էլ իրականացնել իրավահավասարության և հավասար հնարավորությունների սկզբունքը:

Սույն հրատարակության մեջ զետեղվող աղյուսակներում և գծապատկերներում արտացոլվելու են կանանց և տղամարդկանց թվաքանակը բացարձակ թվերով և համամասնություններն ըստ որոշակի հատկանիշների:

Բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալները ներկայացված են մշտական բնակչության ցուցանիշների հիման վրա:

## "WOMEN AND MEN IN ARMENIA, 2018"

*Language available: Armenian, English*
*Format: MS Word , MS Excel , Adobe Acrobat (.pdf.)*
*Issue: October*

"Women and Men in Armenia, 2018" statistical booklet will highlight the ratio between women and men in RA, current situation of using their opportunities in the social life and provide with a necessary information base for development of state gender policy (insuring equal conditions for women and men).

Women and men are to be visible in statistics. Gender statistics reflects the role of women and men in the society, which allows not only to take into account the peculiarities of women and men, by social-demographic groups but carry out the principle of equal rights and equal possibilities. The tables and graphs of this booklet will give absolute numbers and proportions for certain attributes among women and men.

Population data are presented based on the indicators of de jure population.

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ, 2018»




*Լեզուն՝ հայերեն, անգլերեն*
*Ձևաչափ՝ MS Word ,MS Excel , Adobe Acrobat (.pdf.)*
*Թողարկման ժամկետը՝ նոյեմբեր*

«Հայաստանի ազգային հաշիվներ, 2018» վիճակագրական ժողովածուն հանդիսանում է Հայաստանի ազգային հաշիվների համակարգի, ինչպես նաև դրա հետ կապված մոդելների և ցուցանիշների առավել ամբողջական հրապարակումը:

Ժողովածուն պարունակելու է տեղեկություններ 2013-2017թթ. Հայաստանի ազգային հաշիվների համակարգի հիմնական հաշիվների և ցուցանիշների վերաբերյալ՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների և տնտեսության կառուցվածքային հատվածների:

Այն ընդգրկելու է տեղեկություններ համախառն ներքին արդյունքի արտադրության ծավալների, կառուցվածքի, աճի, ձևավորման աղբյուրների և ծախսային բաղադրիչների վերաբերյալ: Ժողովածուն պատրաստվում է ՀՀ ԱՎԾ կառուցվածքային ստորաբաժանումների վիճակագրական տեղեկատվության, այդ թվում տնտեսավարող սուբյեկտներից, այլ կազմակերպություններից, պետական, տեղական ինքնակառավարման մարմիններից և բնակչությունից ստացված տվյալների հիման վրա՝ վիճակագրական հաշվետվությունների հավաքագրման և մշակման, ընտրանքային հետազոտությունների անցկացման, ինչպես նաև «չդիտարկվող տնտեսության» լրահաշվարկների և այլ վիճակագրական դիտարկումների միջոցով:

## “NATIONAL ACCOUNTS OF ARMENIA, 2018”

*Language available: Armenian, English*
*Format: MS Word, MS Excel, Adobe Acrobat (.pdf.)*
*Issue: November*

“National Accounts of Armenia, 2018” statistical handbook is the most complete publication on the System of National Accounts of Armenia, as well as the models and indicators related to the System. This handbook will include information on main accounts and indicators of the System of National Accounts of Armenia by types of economic activities and institutional sectors of the economy for 2013-2017. The handbook will cover information on the Gross Domestic Product output volumes, structure, growth rate, generation sources and using components. The handbook is prepared based on the statistical information from the NSS RA divisions, including data received from economic units, other organizations, state, local self-government bodies and population, through the collection and processing of statistical reports, sample surveys, as well as imputation of ‘non-observed economy’ and other statistical observations.




*Լեզուն՝ հայերեն, անգլերեն*
*Ձևաչափ՝ MS Word, MS Excel, Adobe Acrobat (.pdf.)*
*Թողարկման ժամկետը՝ հոկտեմբեր*

«Հայաստանի ֆինանսների վիճակագրություն, 2018» ժողովածուն պարունակելու է վիճակագրական տեղեկություններ 2013-2017թթ. պետական ֆինանսների, կազմակերպությունների ֆինանսների, դրամավարկային և բանկային համակարգը բնութագրող տվյալների, արտարժույթների փոխարժեքների, ապահովագրական ընկերությունների, արժեթղթերի շուկայի և այլ ֆինանսական կազմակերպությունների ամփոփ ցուցանիշների վերաբերյալ:

Պետական ֆինանսների վիճակագրության տեղեկատվական բազան ձևավորվում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ՀՀ ԱՎԾ տրամադրած պետական և համայնքների բյուջեների կատարման մասին տեղեկատվության հիման վրա:

Կազմակերպությունների ֆինանսների վիճակագրությունը ներառելու է ՀՀ ԱՎԾ կողմից ընտրանքային կարգով ընտրված առևտրային կազմակերպությունների միջև հաշվարկների վիճակի, ինչպես նաև կազմակերպությունների արտադրանքի (ապրանքների, ծառայությունների) արտադրության վրա կատարված ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն: Տվյալների հավաքագրումն իրականացվում է պետական վիճակագրական հաշվետվությունների հավաքագրման միջոցով:

Դրամավարկային և բանկային համակարգի վիճակագրության ցուցանիշները, ինչպես նաև ապահովագրական ընկերությունների, արժեթղթերի շուկայի և այլ ֆինանսական կազմակերպությունների գործունեությունը բնութագրող ցուցանիշները ներկայացվում են ըստ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված տվյալների:

*Language available: Armenian, English*
*Format: MS Word , MS Excel , Adobe Acrobat (.pdf.)*
*Issue: October*

"Finance Statistics of Armenia, 2018" statistical handbook will include statistical information for 2013-2017 on state finances, organizations finances, foreign exchange rates characterizing the monetary and banking system, indicators on as well as exchange rates and aggregated data, of insurance companies, securities market and other financial organizations.

The information base of the state finance statistics is form based on information of state and communities budget performance provided by the Ministry of Finance of RA to the NSS RA.

Finance statistics of organizations will include information on payments between organizations as well as on structure of expenditures on output (goods and services production) from the comercial organizations chosen by the NSS RA by sampling method. Data collection is implemented through the state statistical reports. Indicators on monetary and bank system statistic, as well as Indicators characterizing the activity of insurance companies, securities market and other financial organizations have been presented according to the data provided by the Central Bank of RA.

## «ԳՆԵՐԸ ԵՎ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ, 2018»




*Լեզուն՝ հայերեն, անգլերեն*
*Ձևաչափ՝ MS Word , MS Excel , Adobe Acrobat (.pdf.)*
*Թողարկման ժամկետը՝ սեպտեմբեր*

«Գները և գների ինդեքսները Հայաստանի Հանրապետությունում, 2018» վիճակագրական ժողովածուն պարունակելու է վիճակագրական տեղեկություններ տնտեսության տարբեր ոլորտների 2013-2017թթ. գների և գների ինդեքսների վերաբերյալ:

Առանձին ցուցանիշների գծով կատարվելու են նաև միջազգային համադրումներ և համեմատություններ:

Տեղեկատվությունը ներկայացվելու է ինչպես ըստ հանրապետության, այնպես էլ ըստ ՀՀ առանձին մարզերի (դիտարկվող բնակավայրերի) և ք. Երևանի, տնտեսության տարբեր հատվածների, ապրանքային խմբերի և ապրանք-ծառայության տեսակների:

Տվյալները հաշվարկվելու են արդի մեթոդաբանության սկզբունքներին համապատասխան, ինչը հնարավորություն է ընձեռում դրանք համադրել այլ երկրների համանման ցուցանիշների հետ: Գների դիտարկման և գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանական պարզաբանումները ներկայացվելու են առանձին հատվածով:

## “PRICES AND PRICE INDEXES IN THE REPUBLIC OF ARMENIA, 2018”

*Language available: Armenian, English*
*Format: MS Word , MS Excel, Adobe Acrobat (.pdf.)*
*Issue: September*

“Prices and Price Indexes in the Republic of Armenia, 2018” statistical handbook will cover information for 2013-2017 on prices and price indexes of different spheres of economy. International comparisons will be also done on separate indicators.

The information will be presented by the Republic of Armenia, as well as by RA separate marzes (observed settlements) and sity Yerevan, different sectors of economy, commodity groups and goods-service types.

The data will be calculated according to the principles of modern methodology that enables to compare them with similar indicators of other countries.

Separate chapter will present methodological explanatory notes on observation of prices and calculation of price indexes.

## «ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ, 2018»




*Լեզուն՝ հայերեն, անգլերեն*
*Ձևաչափ՝ MS Word , Adobe Acrobat (.pdf.)*
*Թողարկման ժամկետը՝ դեկտեմբեր*

«Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2018» վիճակագրական ժողովածուն պարունակելու է ՀՀ աշխատաշուկայի վերաբերյալ ամփոփ վիճակագրական ցուցանիշների 2013-2017թթ. ժամանակագրական շարքեր, որոնք ընդգրկելու են տնտեսական գործունեության տարբեր ոլորտներում զբաղվածների, գործազուրկների, տնտեսապես ակտիվ և ոչ ակտիվ բնակչության վերաբերյալ հիմնական ցուցանիշներ (ըստ սեռի, տարիքի, կրթական մակարդակի, վարձու աշխատողների աշխատավարձի, աշխատուժի գնի և ՀՀ աշխատանքի շուկան բնութագրող այլ ցուցանիշներ), ինչպես նաև համառոտ մեթոդաբանական պարզաբանումներ:

## "LABOUR MARKET IN THE REPUBLIC OF ARMENIA, 2018"

*Language available: Armenian, English*
*Format: MS Word , Adobe Acrobat (.pdf.)*
*Issue: December*

"Labour Market in the Republic of Armenia, 2018" statistical handbook will include time series for 2013-2017 of summary statistical data on labour market of the Republic of Armenia, which will cover information on population employed in different spheres of economic activity, unemployed persons, economically active and inactive population (by sex, age, education, wages and labour cost and other indicators characterizing labour market of the RA) as well as brief methodological explanatory notes.

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ 2017 թվականին»
(ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 2-նիշ դասակարգման)




*Լեզուն՝ հայերեն, անգլերեն*
*Ձևաչափ՝ MS Word , MS Excel , Adobe Acrobat (.pdf.)*
*Թողարկման ժամկետը՝ նոյեմբեր*

«Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2017 թվականին» վիճակագրական ժողովածուն պարունակելու է հանրապետության 2017 թվականի արտաքին առևտրի վերաբերյալ տեղեկությունները:

Այն ընդգրկելու է արտահանման և ներմուծման ծավալները (բնաիրային և արժեքային արտահայտությամբ)՝ ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 2-նիշ դասակարգման և Միջազգային առևտրի ստանդարտ դասակարգչի 2-նիշին և լայն տնտեսական դասակարգման համապատասխան, ըստ առանձին երկրների, ամփոփ՝ ըստ ԱՊՀ երկրների, արտաքին աշխարհի և Եվրոպական միության երկրների, արտահանման ու ներմուծման ծավալների դինամիկան՝ ըստ գործընկեր երկրների և արտահանման ու ներմուծման կառուցվածքի:

## "FOREIGN TRADE OF THE REPUBLIC OF ARMENIA FOR 2017 "
*(according to the Commodity Nomenclature of External Economic Activity at 2-digit level)*

*Language available: Armenian, English*
*Format: MS Word , MS Excel , Adobe Acrobat (.pdf.)*
*Issue: November*

"Foreign Trade of the Republic of Armenia for 2017" statistical handbook will cover data on foreign trade of the republic for 2017.

The handbook will include export and import volumes (in kind and value) in accordance with the two-digit level (of the Commodity Nomenclature of External Economic Activity (CN of EEA)) and the Standard International Trade Classification (two-digit level) of commodity coding and description, by Broad Economic Categories by separate countries, in summary form-by CIS countries, the rest world and European Union countries, export and import volumes dynamics by partner countries and by export and import structure.

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ 2017 թվականին» (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 4-նիշ դասակարգման)

*Լեզուն՝ հայերեն, անգլերեն*
*Ձևաչափ՝ MS Word , MS Excel , Adobe Acrobat (.pdf.)*
*Թողարկման ժամկետը՝ հոկտեմբեր*




«Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2017 թվականին» վիճակագրական ժողովածուն պարունակելու է վիճակագրական տեղեկություններ երկրի 2017 թվականի արտաքին առևտրի վերաբերյալ:

Այն ընդգրկելու է արտահանման և ներմուծման ծավալները բնաիրային և արժեքային արտահայտությամբ՝ ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 4-նիշ դասակարգման, առանձին՝ ըստ բեռնամաքսային հայտարարագրերի, քաղաքացիների կողմից կազմակերպված առևտրի տվյալների և ամփոփ:

## "FOREIGN TRADE OF THE REPUBLIC OF ARMENIA FOR 2017" *(according to the Commodity Nomenclature of External Economic Activity at 4-digit level)*

*Language available: Armenian, English*
*Format: MS Word , MS Excel , Adobe Acrobat (.pdf.)*
*Issue: October*

"Foreign trade of the Republic of Armenia for 2017" statistical handbook will cover statistical information on foreign trade of the republic for 2017.

It will include export and import volumes (in kind and value) in accordance with the four-digit level of the Commodity Nomenclature of External Economic Activity (CN of EEA) and also by the customs declarations data, by the data on citizens' trade and in summary form.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ 2017 թվականին»
(ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 10-նիշ դասակարգման)




*Լեզուն՝ հայերեն, անգլերեն*
*Ձևաչափ՝ MS Word , MS Excel, Adobe Acrobat (.pdf.)*
*Թողարկման ժամկետը՝ օգոստոս*

«Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2017 թվականին» (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 10-նիշ դասակարգման) վիճակագրական ժողովածուն պարունակելու է վիճակագրական տեղեկություններ երկրի 2017 թվականի արտաքին առևտրի վերաբերյալ:

Այն ընդգրկելու է արտահանման և ներմուծման ծավալները բնաիրային ու արժեքային արտահայտությամբ՝ ըստ բեռնամաքսային հայտարարագրերի՝ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի, ապրանքների ծածկագրման և նկարագրման 10-նիշ դասակարգման համապատասխան:

“FOREIGN TRADE OF THE REPUBLIC OF ARMENIA FOR 2017”
*(According to the Commodity Nomenclature of External Economic Activity at 10-digit level)*

*Language available: Armenian, English*
*Format: MS Word, MS Excel , Adobe Acrobat (.pdf.)*
*Issue: August*

“Foreign Trade of the Republic of Armenia for 2017” (According to the Nomenclature of Commodity Subgroups of External Economic Activity at 10-digit level) statistical handbook will cover statistical information on foreign trade of the republic for 2017.

It will include the data on export and import volumes by the customs declarations data (in kind and value) according to the Commodity Nomenclature of External Economic Activities (CN of EEA), by subgroups at 10-digit level.

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ, 2018»




*Լեզուն՝ հայերեն, անգլերեն*
*Ձևաչափ՝ MS Word , MS Excel , Adobe Acrobat (.pdf.)*
*Թողարկման ժամկետը՝ դեկտեմբեր*

«Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2018» վիճակագրական ժողովածուն պարունակելու է ՀՀ բնակչության թվաքանակի փոփոխությունը բնութագրող հիմնական ցուցանիշներ, ինչպես նաև երկրի ժողովրդագրական իրավիճակի ամփոփ նկարագիրը 2017թ.՝ նախորդ տարիների համեմատության մեջ:

Առանձին բաժիններով կներկայացվեն տեղեկություններ բնակչության թվաքանակի, սեռատարիքային կառուցվածքի, բնակչության բնական շարժի, միգրացիոն տեղաշարժերի, մահացության և ծնելիության, ամուսնության և ամուսնալուծության, ՀՀ մարզերի տարածքների մակերեսի, դրանցում համայնքների և բնակավայրերի քանակի և մարզերում բնակչության թվաքանակի վերաբերյալ:

## "THE DEMOGRAPHIC HANDBOOK OF ARMENIA, 2018"

*Language available: Armenian, English*
*Format: MS Word , MS Excel , Adobe Acrobat (.pdf.)*
*Issue: December*

"Demographic Handbook of Armenia, 2018" statistical handbook will include main indicators characterizing changes in the population number of RA, as well as summary outline of demographic situation for 2017 compared with the previous years.

Information on age and sex structure, population number, natality, migration, deaths and births, marriages and divorces, surface area of RA marzes (regions), number of communities and settlements and distribution of the number of population by RA marzes will be presented in separate chapters.




*Լեզուն՝ հայերեն*
*Ձևաչափ՝ MS Word , MS Excel , Adobe Acrobat (.pdf.)*
*Թողարկման ժամկետը՝ սեպտեմբեր*

«Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2017 թվականին» վիճակագրական ժողովածուն նախատեսված է սպառողների լայն շրջանի համար և արտացոլելու է հանրապետության 2017 թվականի սոցիալական վիճակը բնութագրող ամփոփ տվյալներ:

Վիճակագրական ժողովածուն պարունակելու է տեղեկություններ սոցիալական ոլորտի՝ առողջապահության, կրթության, իրավական համակարգի, մշակույթի, սպորտի, հրատարակչական գործունեության, գրադարանային ֆոնդի օգտագործման և այլ ոլորտների վերաբերյալ:

Ժողովածուն հագեցած կլինի վիճակագրական աղյուսակներով, գծապատկերներով, յուրաքանչյուր բաժնի վերջում զետեղված կլինեն շարժընթացի շարքերով հավելվածներ:

## "SOCIAL SITUATION OF THE REPUBLIC OF ARMENIA FOR 2017"

*Language available: Armenian*
*Format: MS Word , MS Excel , Adobe Acrobat (.pdf.)*
*Issue: September*

"Social Situation of the Republic of Armenia for 2017" statistical handbook is foreseen for the wide circle of users and it reflects summary data characterizing social situation of the republic for 2017.

Statistical handbook will include information on social sphere: health, education, legal system, culture, sport, publishing activity, use of library stock and other spheres.

The handbook will include statistical tables, graphs, each section will cover annexes with time series.

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ԵՎ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ, 2018»
## (ըստ տնային տնտեսությունների 2017 թվականի կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների)




*Լեզուն՝ հայերեն*
*Ձևաչափ՝MS Word , MS Excel , Adobe Acrobat (.pdf.)*
*Թողարկման ժամկետը՝ սեպտեմբեր*

ՀՀ ԱՎԾ կողմից ամենամյա պարբերականությամբ հրապարակվող «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական-վերլուծական զեկույցի (վիճակագրական ժողովածուի) հիմքում հիմնականում ՀՀ ԱՎԾ կողմից իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքներն են:

Զեկույցը կոչված է տրամադրելու սոցիալական և տնտեսական զարգացումների մասին վիճակագրական տեղեկատվությունը և աղքատության շարժընթացը, ինչպես նաև կենսապայմանների տարբեր տեսանկյունները: Նշյալ զեկույցի հիմքը ՀՀ ԱՎԾ կողմից յուրաքանչյուր տարի իրականացվող տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունն է, որը միջազգայնորեն համարվում է բնակչության կենսամակարդակը բնութագրող տվյալների հավաքագրման առավել կարևոր գործիք: Հետազոտությունների միջոցով տնային տնտեսությունների և առանձին անհատների բարեկեցության վերաբերյալ հավաքագրվում է բավականին հարուստ և արժեքավոր տեղեկատվություն, ինչը հնարավորություն է ընձեռում ՀՀ ԱՎԾ-ին տարեկան կտրվածքով հանրությանը տրամադրել արդիական տեղեկատվություն՝ բնակչության եկամուտների, ծախսերի և կենսապայմանների փոփոխությունների վերաբերյալ:

Զեկույցում օգտագործվում են նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, առողջապահության, կրթության և գիտության նախարարությունների կողմից տրամադրված տեղեկատվությունը: